

ուի նշանակութեան վրա: Նա ջանասեր է չափելու, ներկայից օգուտ քաղելու: Նրա մէջ վաճառականական հեռատեսութիւն չը կայ: Ամսական ուժիւր ստանալով սպորող և մնալիկ երեսը վարող մի պաշտօնեայի նման ուղեղը սահմանափակված է: Նա չէ մտածում նորաձեւութեամբ ծաղկեցնելու վաճառականութեան արհեստը: Չէ խորհում յառաջագիւտելու Եւրոպայի վաճառականից օրինակ առնելու իրեն հըմուտ աշակերտ: Նա միայն առանձին ճգնում է, քրտինք է թափում, ճանապարհորդում է, առնում է, ծախում է, և օգտվում է: Տեսած օգուտն էլ տուած աշխատութեանը հետ համեմատես, շատ սակաւ է: Բայց ինքը դո՛ւ է, որովհետեւ միայնակ ուղևոր է գործել, որպէս զի մէնակ ինքը չափի, ինքը հարուստ լինի: Թէպէտ բնականաբար իւրաքանչիւր ոք իր անձնական շահի վրա կը մտածէ, բայց մի վաճառական այս ընթացքով նպատակին չէ հասնում: Վաճառականութեան պահանջն է միացեալ ոյժ, գործելու համար համալստակ մարմին, այսինքն աւելի կամ նուազ տարբեր ոյժերից բաղկացեալ ընկերութիւն:

Առանց միութեան ապագայ չը կայ: Մեր արդի վաճառականութիւնը առանձնական ոյժերի անհատական գործունէութեամբ նմանում է տաճկական առածին, որ ասում է «ասեղով ջրհոր փորել»:

Մեր վաճառականութիւնը իսկապէս վաճառականութիւն չէ, այլ ծառայութիւն, գերութիւն է: Ուրիշ ազգեր վաճառականութիւնը անուն և փառք վաստակելու համար են անում, իսկ մենք կարծում ենք թէ վաճառականութիւնը միմիայն ապրուստ ծարելու և քաղցից չը մեղմելու չափ ապրելու համար է: Իւրաքանչիւր ոք որ և է մի բանով, որ և է մի զբաղմունքով ապրում է երկրի վրա, բայց վաճառականութիւնը լոկ ապրելու համար չէ: Մի հասարակութեան քաղաքակրթութեան առաջին պայմաններից մինը կանոնաւոր վաճառականութիւնն է: Սրանով ժողովուրդը կարող է համակրութիւն և պատիւ ստանալ մարդկանց առաջ: Պէտք է ազգը վաճառականութեան պահանջներով Եւրոպային ներկայացնել, և ոչ թէ ամենքը զատ-զատ գործեն, մի և նոյն բանի համար առանձին աշխատեն, այս կերպով իրանք կանեն, իրանք կը լսեն: Մինչև անգամ Եւրոպայում քիչ թէ շատ անուն ունեցող մի քանի անուանի հայ վաճառականներ իրանց անունով և պատուով հանդերձ ոչ մի ժամանակ հայ ազգը իրեն վաճառական ազգ չեն կարող ներկայացնել Եւրոպային: Վաճառականական համբաւը ընդհանուր ազգին պէտք է պատկանի: Զորքինակ, Հնդկաստանում ունենք Աթէ Աբգար բազմամիլիոն հայ վաճառականը: Իսկ կենտրոնացած մի ոյժ է: Օրից օր կընդարձակ-

վի, կը մեծանայ: Բազմազեղ փողերի տոկոսները միայն բաւական են տարիներ ընթացքում դրամազուլը բազմապատկելու: Աշխարհիս վրա որքան հայ վաճառականներ կան, ամենքի կարողութիւնը եթէ հաւաքենք, Աթէ Աբգարի հարստութեան չի հասնի, բայց միայն Վիէնայի մի քանի դրամական կամ վաճառականական ընկերութեանց դրամազուլները եթէ հաւաքենք, Բօշիլիլի հարստութիւնը կը գերազանցէ:

Ահաւասիկ ընկերութեանց արդասիրը: Ինչպէս մեր յօդուածի սկզբում յիշատակեցինք, հայ պարբերական թերթերում, մանաւանդ «Մշակ»-ի մէջ քանիցս անգամ նմանօրինակ յորդորներ հրատարակված և հայ վաճառականների ուշադրութիւնը հրաւիրուած էին գլխաւորաբար ընկերութեանց օգտակարութեան մասին: Մենք որ երկար տարիներից ի վեր Վիէնայ բնակվում ենք, հասապաղ ականատես եղած ենք և նոյն իսկ 10 15 տարիներ առաջ կազմված մի քանի ընկերութիւնների գիտելը, որոնք ներկայումս նշանաւոր հանդիսացած և միլիոնատէր եղած են: Սոյն առթիւ յառաջագոյն հրատարակված յօդուածների կարեւորութիւնը ներկայ յօդուածով ևս հաստատուելով հանդերձ, մեր նպատակը այս անգամ մեր հայ վաճառականներին պարզ և զիւրազգիւրդելի մի առաջարկութիւն է, այն է՝ գոնէ առ այժմ իրեն մի սկիզբ և փորձ, Բագուի նաւթագործութեան առևտուրը իրանց սեպհականացնելն մի ընկերութիւն կազմելով: Մենք կատարեալապէս համոզված ենք, որ անիրաւորելի մի բան չէ մեր առաջարկածը: Միայն հաստատատելութիւն և կարծեաց համաձայնութիւն է հարկաւոր: Նաւթագործութեամբ պարագայ բոլոր հայ վաճառականները գիտեն, որ նաւթը Եւրոպայում կանխիկ ոսկի է, որովհետեւ ապրանքի չափաւորութիւնը համար ուշադրութիւնը պարագայով վաճառականներին նախկազմել մի հաստատուն ընկերութիւն, որի անդամակիցները կը լինեն նոյն իսկ իրանք, երկրորդ, կունենան մի պահեստ Բագուի մէջ, որտեղից կը բերվին նաւթերը Եւրոպա ուղարկելու համար: Ինչպէս Եւրոպայում, նոյնպէս ամեն տեղում, չորեկաւոր, չորեկաւոր, առաջատարումը նաւերի և ուրիշ այլ և այլ փոխադրիչ ընկերութիւններն միշտ պատրաստ են գները վրա գեղջումներ անելու մեծ քանակութեամբ փոխադրելու: Ապրանքների համար: Կազմվելը նաւթագործութեան ընկերութիւնը անկասկած ձեռնառու և արդիւնաւոր պայմաններով կարող է կապվել ապրանք փոխադրիչ այս տեսակ ընկերութեանց հետ:

Ընկերութիւնը կունենայ կամ Եւրոպայի մայրաքաղաքներում մի մի հայ ներկայացուցիչ և կամ

Եւրոպայի համար ընդհանուր հաւատարմատար մի անօրէն ներկայացուցիչ, որի պաշտօնը կը լինի ընկերութեան նաւթերը օրինակներով ծախել և փողը ուղարկել ընկերութեան փողովին, որ նա իւրաքանչիւր նաւթագործին յանձնած ապրանքին համեմատ հասցիւթից ընկած բաժինը իրան կը հատուցանէ: Այսպիսով նաւթագործութիւնը մի մարմին կը լինի և կը հռչակվի Եւրոպայում «Բագուի հայ նաւթագործական ընկերութիւն» անունով:

Ընկերութեան միակ ջանք և նպատակը նա պէտք է լինի, որ իր իրաւացի օգուտը ուրիշ ընկերանք չը դնէ: Փոխանակ ուրիշ ձեռքով իր նաւթը ծախելով մի երրորդ միջամարդի ևս բաժին հանելու, իր փողը իրան կը մնայ, որովհետեւ ինչ որ անում է այդ օտար միջամարդը, հայն էլ շատ լաւ կարող է նոյնը անել: Մինչև անգամ ընկերութիւնը ի հարկին պատգամաւորութիւններ կարող է ուղարկել պետական պաշտօնական վարչութեանց թէ փոխադրութեան գները զեղջումներ մասին աղբյուրներ մատուցանելու և թէ ընկերութեան կազմակերպութեան նպատակի օժանդակութիւններ խնդրելու համար:

Ընկերութիւնը մի անգամ հաստատուն հիմքով կազմվելու կէտին վրա է դառարին խնդրել: Մի անգամ կազմվելուց յետոյ, այնուհետեւ կարգը ինքնիրան ցոյց կը տայ թէ ինչ միջոց և ինչ հնարքների գիտել է հարկաւոր:

Մենք հայերս, թէպէտ վերջերում Եւրոպայի ուշադրութիւնը քիչ թէ շատ մեր վրա դարձնելու բարեմասնութիւնը ունեցած ենք, բայց տա-կային այն դարգացման կէտին չենք հասել, որ կարողանանք քաղաքագիտական անտեսութեամբ Եւրոպայի այդ ուշադրութիւնը առաւել ևս դրաւել: Մինչև այդ կէտը հասնելու համար փոխանակ ձեռքերին կապած սպասելու, գոնէ աշխատենք առ այժմ վաճառականական տնտեսագիտութեամբ ինքզինքնին ցոյց տալու:

Քանիցս անգամ Եւրոպայի թերթերը Տաճկա-Հայաստանում մեր հաստատած զարոցների վրա խօսելով, մեր դաստիարակիչ ընկերական հիմնարկութեանց համար գովաստներ կարդացին, ուրեմն ինչի նոյն գովաստները կարգաւ չը տանք մեր առևտրական ոյժերի միացման և գործունէութեան մասին: Քաջայայտ ենք, որ Բագուի ողջամիտ ազգայնքը մեր դրածներին կարեւորութիւն կը տան, և ուրիշ քաղաքների դրամատէր հայ վաճառականներն էլ Բագուի հայերի հետ միանալու պէտքը կը զգան, և ուշի ուշով մտածելուց յետոյ կը յիշեն այն երեկի զօրապետին խօսքը, որ երբ իրան հարցվել է թէ—ինչ է հարկաւոր պատերազմի համար—փող փող, փող է պատասխանել—այնպէս էլ մեր ազգի նաւթական և բարոյական յա-

ւաջողութեան և զարգացման համար հարկաւոր է ընկերութիւն! Ընկերութիւն! Գարձաւ ընկերութիւն!...

ՆԱՍՏԻՍ ՍՈՒՐԱՄԻՑ

Նոյեմբերի 30-ին

Ներկայումս Սուրամի հասարակութեանը զբաղեցնում է երկու խնդիր՝ երեսփոխանի ընտրութիւնը և ուսումնարանի դրամական անապահով դրութիւնը: Առաջինը պատճառեց երկար խոս-վութիւններ և անբաւականութիւններ: Բայց ամսոյս 29-ին Գորու յաջորդ Գէորգ վարդապետը, հաւաքելով ուսումնարանում հասարակութեանը, բացատրեց նորանց երեցփոխանի նշանակութիւնը և նրա պարտաւորութիւնները և առաջարկեց ընտրել նոր երեցփոխան պ. Գ. Ջալիտեանցի փոխանակ: Հասարակութիւնը միաձայն ընտրեց պ. Գ. Գրձեւեանցին: Յայտնենք, որ պարտը կիրակա-նացնի այն յոյսերը, որ զրեւ է հասարակութիւնը նրա վրա—ծառայելով եկեղեցու շահերին: Ինչ որ վերաբերում է ուսումնարանի անապահով դրութեանը, իսկապէս սա մի այնպիսի խնդիր է, որ ամեն մէկ սուրբամեղ պէտք է հրաւիրել լըջըրէն մտածելու սրտ վրա: Ահա, եթէ չեմ սխալվում, հինգերորդ տարին է, որ Սուրամը ունի երկսեռ ծխական ուսումնարան:

Մեծ փառք պ. Գ. Ջալիտեանցին, որ ծախսելով մեծ դրամար, նուրբել է հասարակութեան մի գեղեցիկ երկարակյան շինութիւն, որի մէջ տեղաւորվում է թէ տղայոց և թէ օրիորդաց ուսումնա-րանը: Ուրեմն պէտք է պահպանել այդ հիմնարկութիւնը և միջոց տալ երկար տարիներ ծառա-յելու ժողովրդին: Ուսումնարանը զրկված չէ աղ-բիւրներից, ունի մի համեստ դրամազուլ, որի վրա աւելացնելով մոմավաճառութեան արդիւն-քը—այդ դուռը կարող է պահպանել ուսումնարանը նախապէս ապահով դրութեան մէջ: Գրամազուլով շահեցնելու համար տոկոսով մտածել է այս կամ այն հային և մեծ մասամբ նրանց, որոնց որդիքը ձիւրաբար դաստիարակվում են ուսումնարանում: Այժմ ոչ մէկը դրանցից չէ զրկանում հոգաբարձութեան պահանջին—վերա-դարձնելու ուսումնարանի փողը:

Բայց ինչպէս կարող է իր գոյութիւնը շարու-նալի մի ուսումնարան, որի գոյութեան արդիւ-րը, միջոցը, կտրուկ է նոյն իսկ հասարակութիւ-նը: Թող պատասխանէ իր խղճին ամեն մի Սու-

նրանց երգերին ականջ դնելու: Երգիչները տեսնելով այդ աւելի էին կընկապաւորւում իրանց ձայները և մինչև լոյս դուգէ անաղար երգէին, եթէ տէր հայրը չը հրամայէր նրանց շուտով ժողովուրդի գնալ եկեղեցու դուռը մոմ վաճա-նելու, լսելով դէպի եկեղեցին բարձրացող դուռ-նաների ձայները և իմանալով որ ուխտաւորներ են գալիս:

Ներտաւարները իսկոյն խոնարհվեցան իրանց տված հրամանի առաջ:

Զուռնայի առաջին խումբը հասաւ եկեղեցու դուռը, այնտեղ բոլորեց, և երիտաւարները սկսեցին պարել, յետոյ դադարեցնելով այդ հրաշաւոր նուագաբանի ձայնը, մտան եկեղեցի ուխտ անելու:

«Այ սուրբ Գէորգ, աղբրում էր մի առոյց, յաղթանդամ և գեղեցիկաբէմ երիտաւարդ, քեզանից ոչինչ չեմ ուզում, ոչ հարստութիւն, ոչ փառք և ոչ պատիւ, ինչ կայ բաւական է, միայն խեղճ Աննայի բարեբաղդութիւն և նրա ծնողացը դուրս տուր,—երիտաւարդի աչքերը այդ միջոցին լցվե-ցան արտասուքի դառն կաթիլներով և որպէս զի նրա ընկերները չը նկատեն այդ դարձաւ նա դէպի միւս կողմը, աւազանում ամած խաչի ջրից քիչ լսեց և քիչ էլ ձակատին ու աչքերին բոց արտասուքի կաթիլներ ինչ խառնելով:

Այս խումբը վերջացրեց իր մաղթանքը և դար-ձեալ զուռնով հեռացաւ եկեղեցուց: Նրան հետեց երկրորդը, երրորդը, չորրորդ և շարունակաբար մէկը միւսի ետեղի հայ և թուրք զուռնաչիներով մինչև առաւօտը գալիս էին:

Վրաններում մանր երեխաները և հասակաւոր մարդիկ ժամ 1-ից արդէն քնած էին, միայն երի-տաւարը մարդկանց աչքներին քռն չէր գալիս, վերջիններիցս որը տեղը զգելով, սիրելի հետ

թե ինչի տուած ման էր գալիս վրանների շուա-քում և անործելի «մաւրահաթ» անում, որը դուռնոր սէր էր օրոնում և այն. այստեղ հայ կիներ, որ իր հասակաւոր աղջկան լոյս ցերեկով քաղա-քի կամ գիւղի փողոցով մանակ անցնել չէր թողնի, այժմ բոլորովին ազատութիւն էր շնորհել նրան և կարծես ամեն բան պիտի ներվի այստեղ. աղ-ջիկը իրաւունք էր համարում կանչել անցնող երի-տաւարդի յետեղ և յետոյ սկսել բարձր ձայնով ծիծաղել նրա վրա, կամ բռնել փշիչից և փախ-չել, մի խօսքով նրան ներել էր այն ամեն դուր-ձողութիւնները, ինչ որ իրան ուղարկութիւն և բաւականութիւն է պատճառում:

Այսպէս անցաւ առաջին գիշերը. առաւօտեան ծէգին դուռնաների ձայնը սկսեց փողը ինչ հանդարտվել, լուսանքին չէր թողնի, ցիլի սեռը դիմում էր եկեղեցի և մարդուն աչքին պատկերացնում զանազան տեսարաններ:

Ահա մի կին մի բամբակէ սպիտակ թիւ փաթե-թից եկեղեցու չորս բուրդով, համբուրելով պատի բարերը և անընդհատ երեսին խաչ հանելով:

«Այդ ինչու է այդպէս թիւը փաթեթում, հա-ցնում եմ մօտ կանգնած մարդուց:

Մի պառաւ կին լսելով հարցս և չը սպասելով, որ հարցատէրը խօսէ, շուտապէս է ինքը պատասխանել:

—Այդ իմ հարսն է, արդի. Բօշիլիլը ըս մուրա-զը տայ, այն կապում է, ասած ունի, որ ու Գէ-որդը քիչ նման մի օրդի տալ նրան:

—Հատ լաւ, յարակցում եմ ևս, միթէ առանց թիւը կապելու եթէ խնդրէ, ու Գէորդը չի կատա-րի նրա ցանկութիւնը:

Չէ, որդի ջան, երկխոյ բերելու համար թիւ է միայն հարկաւոր կապել, ինչպէս մեր գովաւորն-րը ջիւր ու տնիւր: համար միշտ խնդի են տա-

լիս. այնպէս ամեն բան իրա կարգն ունի, որդի, ջանիլ ևս, կը մեծանաս, կը պսակվես այն ժա-մանակ կիմանաս:

Պառաւը դու խօսքը չաւարտած առաջովս չո-քէչըր անցաւ մի գեղեցիկաբէմ թուրք կին, որը հասնելով եկեղեցուն նոյնպէս սկսեց թիւ փաթե-թիւ եկեղեցու չորս բուրդը: Խօսակցութիւն տես-նելով այդ շարունակեց:

—Տեսնում եմ, որդի, ահա այդ անօրէն թուրքի պառաւն էլ հաւատալով մեր խաչերին ու կարգե-րին, կապում է թիւը, իսկ հիմիկվայ ջանիլ տը-ղիքը մեր բուրդ բաները դարտակ և յիմար են համարում ինչ. անեմ, զմիշտ էլ չեմ ասեմ թէ մի խաչի զօրութեամբ տալին ընկնեն, իմանան և հա-ւատան բուրդին, ահա երեք օր է մի խեղճ կնիկ եկել է այստեղ և լեղուն կտրվել է, միթէ ու Գէորդի հրաշքը չէ:

Այդ միջոցին ուշադրութիւնս դրաւեց մօտակայ տեղը հաւաքված երեսնաների մի խումբ և ևս թողնելով պառաւին զիմեցի այնտեղ, երեսները շրջապատել էին մի ընթոյշ օրիորդի չորս կողմը, որը զոյնը փոխած հեկեկում էր:

«Ինչու է լաց լինում այդ օրիորդը, հարցրի ևս կանգնած մարդկանցից:

—Իրանց խնդրելը պատասխանեցին ինձ. մայրն ասած է ունեցել, որ 15 տարեկանում բերի աղ-ջկայ մազերն այստեղ կտրի, հիմայ աղջիկը չէր թողնում ախտաւոր նրանց, բայց մայրը խըս-տութեամբ կտրուց և դրա համար էլ նա լալիս է:

—Այսինքն ինչ կը նշանակէ «ասած է ունեցել» և ինչ արաւ մազերը, դարձեալ հարց տուի ևս:

—«Ասած է ունեցել» խօսքը, ճշմարիտ, ևս ին-քն էլ չեմ հասկանում թէ ինչ յիմարութիւն է, մազերն էլ տարաւ ահա այնտեղ ծաղկը կապում է:

Մօտեցայ ծառին և տեսայ, որ ոսկէփայլ մա-զերից հիւսած մի բաւականի հաստ և երկայն ծառ կախած է ծառի ճիւղից և մի բանի օրիոր-դներ տարաւորած նայում էին:

—Ո՛հ, հոգս զլսելի, ասում էր մի օրիորդ, խեղճ Աննայի էն ոսկու նման հրաշալի մազերը կտրեց, յիմարի նման բերաւ էս տեղից քաշ արաւ, տես-նենք ինչ ա լինելու. ախտոս էդ մազեր. Աստուած փրկան ում ա տվի շտաճն (ճաշակը) ում. էդ մա-զերը բանի քանի աղջկեանց նախանձ է շարժել: Միտդ է, Մարիամ, Հռիփսիմէն ինչ էր ասում էն օրը դրա մազերի համար:

—Խեղճ Աննա, 15 տարի մազ է սանրել պա-հել, որ այսօր ծաղկը կապեն, շարունակեց միւս օրիորդը:

—Է՛հ, էն լատարիան շատ դուռաւ է խօսում, երկ Աննան լատարիւմ իրա բաղդին լամպը դը-ցեց, սև մատիտ դուրս եկաւ, հենց դրա խմանա-կըն (օրինակը) էր... Գրիգորը որ դրա հետեղ էր ընկել, հենց առաւելապէս դրա մազերից զմայլված, ևս լսել եմ նա միշտ Աննայի մազերն էր գովում, հիմա տեսնենք ինչը կը գովի—ասում էր Մա-րիամը:

Ես այլ ևս չը կանգնեցի, որովհետեւ տէր հայրը կանչեց ինձ և խնդրեց, որ վաղը միւս երիտա-ւարդների հետ օգնեմ նրան մոմ վաճառելու թա-փօրի ժամանակ. ինձ ոյժ տալու համար սկսեց մի կարճ բարդով յայտնել, որ մոմ արդիւնքը Ներսիսեան ուսումնարանի օգտին է և մենք երի-տաւարներս միշտ պարտական ենք մեր կար-գութեան չափ օգնել նրան:

Ուրախութեամբ ընդունեցի տէր հօր առաջա-րկութիւնը և հեռացայ:

(Կը շարունակվի)

լամբից և ձեռք տայ ուսումնարանին մի այսպիսի կրիտիկական բնույթով, երբ նրանից օգնութիւն է խնդրուած:

Յ. Արդուեթեանց

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Սպանիական թղթակցից Օղոնսօվանի կենսագրութիւնը:—Մարտին, որը արիւնքաւոր զօրք տուեց անգլիացիներին, չը բաւականացաւ 10,000 եղիպտացիներին և նրանց անգլիական օֆիցէրներին սպանելով, նա սպանեց զնոնքալ Վիկտոր զօրքը ուղեկցող երեք թղթակցները երկուսին նա, այն է Լէյպցիգի պատերազարդ լրագրի թղթակցին և «Daily News» լրագրի լրագրորդի յայտնի Օղոնսօվանին: Տասն և չինգ տարի առաջ Օղոնսօվան շնորհաւորական գնաց, որպէս այդ լրագրի թղթակց: «Daily News» լրագրի խմբագիրը գրեց նրան. «գնացե՛ք Ասիա և քաղեցէ՛ք այնտեղից, ինչ որ կարող էք լաւը»: Օղոնսօվան ճանապարհորդեց շնորհաւորական. անցաւ այն լեռներէ, որոնք բաժանում են նրան կենտրոնական Ասիայից: մի քանի ժամանակ անցկացրեց Աֆգանստանում և ապա Եւրոպա վերադարձաւ: Նա մի քանի անգամ վերադառնում էր հնու, առկա ծանօթ երկրներից Անգլիա, բայց այնտեղ միայն նրա համար էր մնում, որ տեսակցի իր իրականացի բարեկամների հետ և վերանորոգի իր պայմանները «Daily News» լրագրի և այն հրատարակչներին հետ, որոնք ամենքն էս սաստիկ ցանկանում էին տպել նրա ճանապարհորդութիւնները: շնորհաւորները, աւգանները և կիբիզները լաւ էին ընդունում այդ եւրոպացուն, որը խօսում էր նրանց հետ նրանց լեզուով: Նա յարգանք էր դրաւում դէպի իր անձը իր սառնասրտութեամբ և համարձակութեամբ: Մի անգամ նա կամեցաւ նոր երկրի տեսնել և նա իր երկու ծառաների հետ միասնակ ուղևորվեցաւ Կենտրոնական Ասիայի միջով Պարսկաստան: Այնտեղ նրա հետ շատ արկածներ պատահեցան, որ նա շատ գեղեցիկ նկարագրեց: Պարսիկները նրան ռուս լրտեսի տեղ ընդունեցին և բանտարկեցին նրան: Այդ կրիտիկական գրութեան մէջ Օղոնսօվան գլուխը չը կորցրեց, նա հանդիստ կերպով բացատրեց պարսիկներին, որ ինքն անգլիացի է, և ոչ թէ ռուս, լրագրի թղթակցի է, և ոչ թէ լրտես, և նրան աղաւթ թողնեցին: Նա Ռուսաստանով Եւրոպա վերադարձաւ: Նրա օրագրութիւնները չճանապարհորդութիւն ի Մէլբորն վերադարձով նրան ամբողջ հարստութեան տէր դարձրին: Բայց նա չը կարողացաւ երկար մնալ Անգլիայում և կրկին վերադարձաւ Արեւելք: Կ. Պոլսի մի սրճարանում նա ինչ-որ մի անգղոյշ խօսք ասեց և Բ. Գուլը երկար ժամանակ նրան բանտարկեցած պահեց: Վեց ամսից յետոյ Օղոնսօվան Սուլթան ուղևորվեցաւ, նա այնտեղ գնաց հետեւալ պայմաններով: 50,000 Փրանկ տարեկան ռոճիկ, մի տարակալ փողը սկզբից ստացաւ և անսահման կրեղիտ ծախսերի համար: Բացի դրանից նրա հրատարակիչը վճարեց նրան սկզբից 100,000 Փրանկ: Այսպիսով նա ուղևորվեցաւ 150,000 Փրանկով և անսահման կրեղիտով: Չը նայելով այդ փառաւոր պայմաններին, նա մի բանով կարծես անհանգիստ էր և մտածում էր, որ չի վերադառնայ: Այդ պատճառով նա գրեց իր կտակը, թողնելով իր ամբողջ կարողութիւնը և իր ձեռնադրները հրատարակման իրաւունքը Վրլանդական ազգային լիգային:

Վիկտոր Զիւզօի մասին:—Ֆրանսիական մեծ բանաստեղծի առողջութիւնը, չը նայելով նրա զուսման տարիներին, դեռ էս լաւ է, բայց նրան սաղտութիւն է պատում: Նրա խղճիւնը, որը նա կամ չէ նկատում կամ չէ կամենում խոստովանել, հնուցում է նրան մարդկային հասարակութիւնից: Լիւզօի սովորական այցելուները իրաւունք չունեն զուստ բողբոջ անելի նստել նրա մօտ, իսկ օտարներին քաղաքավարի, բայց սառն ընդունելութիւն է ցոյց տալիս: Անգանի վրա միայն Վիկտոր Զիւզօն թող է տալիս շրջապատել իրան բարեկամներով և իր տաղանդը պաշտօններով և այնտեղ նա սկսում է կենդանի և փառաւոր խօսակցութիւն: Երեկոյեան ինն ժամին Զիւզօն մտնում է իր ննջարանը, ուր մինչև կէս գիշերը քայլում է մէկ անկիւնից դէպի միւսը, մտածելով նոր հեղինակութիւնների վրա: Ամեն օր, 12 ժամին նա մի ռուս իշխանուհու հետ միասին կաթով գնում է

գրասենյու Բուլճոնան անտառը: Այդ իշխանուհին նոյնպէս բանաստեղծ է և Վիկտոր Զիւզօի ջերմ երկրպագոյ է, և մի և նոյն ժամանակ շատ հարուստ է: Նա Զիւզօի համար գնաց գեղեցիկ շինված յարմար կառք փառաւոր ձիաներով: Իշխանուհին վճարել է, որ բանաստեղծի մահից յետոյ այդ ձիաները հանգիստ կառնեն նրանց համար շինված առանձին ախոռատան մէջ, իսկ կառքը կը պահվի որ և է մասնաւոր թանգարանում: Ինքն իշխանուհին շատ լաւ կրթութիւն առած կին է և ցանկանալով, որ իր զաւակները շատ օգուտ կարողանան քաղել մեծ ծերոջուհի հասարակութիւնից և խօսակցութիւնից, նա հրամայում է նրանց ուղեկցել բանաստեղծին նրա լրջոր գրասենյակի ժամանակ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

ՄՈԳԻԼԵՎ-ՊՈԴՈԼՍԿԻ, 5 դեկտեմբերի: Բէսսարաբիայի մէջ հիմնվում է գինեգործների ընկերութիւնը:

ԵԿԱՏԵՐԻՆՍՈՒԱՎ, 5 դեկտեմբերի: Ապահովական ընկերութիւնների գործադատարները վարչութիւնների կարգադրութեամբ փոքրացնում են ապահովական վարձատրութիւնը 30%:

ՎԻԼՆՈ, 5 դեկտեմբերի: Սարատովսկի 108-դ գունդի նախկին հրամանատար գլխաւոր Արիստով և գնդային տնտեսութեան կառավարիչ մայոր Կոստիցին դատաւարտված են զինուորական նահանգական դատարանից: Արիստով կալանաւորման 10 ամսով, իսկ Կոստիցին 2 ամսով:

ԿԻԵՎ, 5 դեկտեմբերի: Զինուորական նահանգական դատարանը արգարացրեց հրաժարված փոխ-գնդապետ Զայցովսկուն և շտաբօտմուսար Ալէյնիկովին, առանց ապացոյցի յայտնելով նրանց մեղադրանքը գեղձումների մէջ անցեալ ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ:

ՎԱՐՇԱՎԱ, 5 դեկտեմբերի: Յայտնի շուէր Կուսօզինսկի դատաւարտված է առանձին իւրաւունքներից զրկելուն և կալանաւորմանը բանւորների տան մէջ 5 1/2 ամսով:

ՕՐԷՆԲՈՐԳ, 5 դեկտեմբերի: Երէկ երաժշտական-դրամատիկական արհեստի սերողներին մասնակցութեամբ հասարակական ժողովարանի դահլիճում տօնվեցաւ ռուսաց առաջին տպագրող Իվան Ֆէօդօրովիչի երեք հարիւրամեակը միաժամանակ Պուշկինի Օրէնբուրգ այցելելու յիսունամեակի հետ:

ՆԻՃՆԻՆՆՈՎԳՈՐՈՎ, 5 դեկտեմբերի: Իվան Ֆէօդօրովիչի երեք հարիւրամեակի առիթով հոգեհանգիստ կատարվեցաւ տպարանատէրերի և նրանց մօտ ծառայողների ներկայութեամբ:

ՀՈՍՄ, 5 դեկտեմբերի: Այստեղ հասաւ գերմանական թագաւորական:

ՀՈՆԿՈՆԳ, 5 դեկտեմբերի: 6000 զինուորներից կազմված Ֆրանսիական զօրաբաժինը մի նաւատորմի հետ ուղևորվեցաւ դէպի Սօնտայ և ափ իջաւ նրանից եօթմիջոն հեռաւորութեամբ, որտեղ, ընդդիմադրութեան չը հանդիպելով, բանակ դրեց: Յարձակումը Սօնտայի վրա սպասում են դեկտեմբերի 12-ին: Թշնամու ցոյցերը որոշվում են 20,000 զինուորներով:

ՎԻԵՆՆԱ, 5 դեկտեմբերի: Պոլիցիան 1000 զուգէն վարձատրութիւն նշանակեց այն հատորութիւնների համար, որոնք կարող են նպաստել պոլիցիական աստիճանաւոր խլաւթիկին Ֆորիգսգորֆի մօտ սպանողի գտնելուն: Կասկածված է հաց ծախող Շաֆհուզէն, որ ճառ արտասանեց բանւորների ժողովի ժամանակ և յետոյ ուղեկցում էր խլաւթիկին: Կալանաւորված են ըս-

պանութեանը համախոհ լինելու մէջ կասկածված սօցիալիստ Տիւլ հայրը և որդին և ուրիշները:

ՍՕՖԻԱ, 5 դեկտեմբերի: Շաբաթ ազգային ժողովի մէջ քննվում էր հարցը բօլշակական առաջնորդարանի գրութեան մասին Կ. Պոլսի մէջ: Արտաքին գործերի և դաւանութիւնների միւնիստր Բալաբանով յայտնեց, որ բօլշակական կառավարութիւնը չէ կարող անտարբեր դանդիլ դէպի առաջնորդարանի վիճակը, որի մի մասը եկեղեցական տեսակէտից Բօլշարիան է: Լուրերը Կ. Պոլսի առաջնորդարանի ոչնչացնելու մասին Բալաբանով չափազանցած անուանեց և ասաց, որ առաջնորդարանը շրջապատված է բազմաթիւ դժուարութիւններով, որոնց առաջն առնելու համար անհրաժեշտ է համբերութեամբ և զգուշութեամբ գործել և Բօլշարիան գործողութեան ազատութիւն ունի այդ հարցի վերաբերութեամբ:

ԶԱԳՐԷԻ, 5 դեկտեմբերի: Բացվեցաւ Խօրվատական սէյմը: Նոր Բանը ճառ արտասանեց հաշտեցող ոճով: Ճառը համակրութեամբ ընդունվեցաւ:

ԼՕՆՈՆ, 5 դեկտեմբերի: Այսօր կախված է Օդեսէլ ձէմն Կէրրին սպանողը:

ՊԷՇԱ, 5 դեկտեմբերի: Երկրորդ կարգի դատարանի մէջ սկսվեցաւ Տիսա Էսպարական գործի քննութիւնը:

ՄԱԻՐԻ, 5 դեկտեմբերի: Կալանաւորված է Զօրիւյի շրջաբերականը, որ պարունակում է զինուորական ապստամբութեան պաշտպանութիւնը և հրաւեր դէպի ապստամբութիւն: Գործը դատարանին է յանձնված:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 6 դեկտեմբերի: Այսօր Թագաւորական տնտեսակալութեան տօնի առիթով մայրաքաղաքը զարդարված էր զրօշակներով: Խաակիեփսկի մայր-եկեղեցու մէջ պալատական և բարձրաստիճան անձանց ներկայութեամբ առաւօտեան 10 ժամին սկսվեցաւ ժամասացութիւն, որից յետոյ կատարվեցաւ դահուական մաղթանք: Կէսօրին զօրահանդէս է նշանակված զվարդիայի այն մասերին, որոնք տօնում են այսօր իրանց գնդային տօնը: Գիշերը լուսաւորութիւն կը լինի: Սպասում են, որ Ֆինանսների միւնիստրութեան կից հիմնադրուող խորհուրդը խմբիքներին առևտրի կանօնները քննելու համար դեկտեմբերի վերջին կը վերջացնի իր աշխատանքները, ռուսի նոր կանօնները կառավարվեն պետական խորհուրդին եկող տարակալ սկզբին: Լուր է տարածված, որ այն համաձայնութիւնների և պայմանների ցոյցի հարցը, որոնք նշանակված են վօլօսաների վարչութիւնների գրքերում, վճռված է այն մարմնի, որ ներանք դատաստանական ապացոյցի անվիճելի ցոյց կունենան: Փոխադարձ ապահովութեան ժողովի երէկայի նիստը ամբողջապէս նուիրված էր ընդհանուր օժանդակող դրամադրի և դժուար գրութեան մէջ եղած ընկերութիւններին օգնելու հարցի քննութեանը: Այդ հարցը դրականապէս վճռվեցաւ: Թողովը ընդունեց նոյնպէս ըսկզբունքով յանձնաժողովի ղեկուցումն ժողովները ընդհանուր և շրջանների բաժանելու մասին, յետաձգելով այդ հարցի վերջնական մշակումն մինչև հետեւեալ ժողովը: Նրէկ Կազանսկի մայր-եկեղեցու մէջ ռուսաց առաջին տպագրող Իվան Ֆէօդօրովիչի հանգիստաւոր հոգեհանգիստը կատարվեցաւ: Գրական Ֆօնդի կողմից ընտրված յանձնաժողովը Տուրգենիւս արձան կանգնելու համար մտադիր է գերեզմանի վրա վէմից և մարմարից մի մեծ արձան դնել «Տուրգենիւս» գրուածքով: Մտադրութիւն կայ

գերեզմանը զարդարել ծաղկանոցով և շրջապատել երկաթէ ցանկապատով:

ՓԱՐԻՑ, 6 դեկտեմբերի: Ֆէրրի հաղորդեց պատգամաւորների ժողովին, որ Ֆրանսիացիները սկսեցին յարձակվել Սօնտայի վրա:

ՀՈՕՄ, 6 դեկտեմբերի: Պաշտօնական լրագիրը գերմանական թագաւորական այցելութեան առիթով ասում է, որ թագաւորականը հասաւ Հոմ Երրե իր հօր ներկայացուցիչ, որպէս զի նորից ապացուցանէ Գերմանիայի բարեկամական զգացմունքները և միացնի սրտադին բարեկամական կապերը, որոնցով կապված են երկու պալատները և ժողովուրդները: Թողովրդական լուսաւորութեան բնագիտի քննութեան ժամանակ Գէպրէտիս յայտնեց, որ միւնիստրութիւնը համախոհ է և միւնիստրութեան գոյութեան հարցը կախված յայտնեց ժողովրդական լուսաւորութեան միւնիստրին հաւատարմութիւն յայտնելուց:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այսօր, դեկտեմբերի 8-ին, Արծրունու թատրոնում, հայ-դերասանական խումբը, կարգադրութեամբ պ. Գ. ՉՄԵԿԱՆԻ կը տայ ներկայացումն մասնակցութեամբ Պօլսոյ խմբի դերասան ԹՈՒՐԵԱՆԻ

I. ՍՕՖԻԱ, դրամատիկական հանդէս 2 բաժանմունքով, թարգ. Աւալեանցի և II. ԱՍՏՂԱԳԷՏ, ՈՐԿԱՄՈՒԹԵՆԻՑ, կօմէդիա 2 արարուածով, թարգ. պ. ԹՈՒՐԵԱՆԻ:

Տօմսկները ծախվում են կասսայում, սովորական գներով:

1—1

Յայտնի և տաղանդաւոր բանաստեղծ ՍԷՅԱՍԻ (Կապիտան Պետրոս-Բեդ Մատաթեանց) ընտիր բայց անտիպ միացած բանաստեղծութիւնները փոշու տակից և կուրտեան ճանանապարհից ազատելու համար հատորներով հետգհետէ լոյս աշխարհ պիտի հաննամ: Ամենայն ինչ պատրաստ շուտով մամուլի տակ կը մննէ իմ սեպհական տպարանում արագատիպ մեքենայով: Առ այժմ կը տպվի երեք հատորիկը միասին, կանխիկ բաժանորդագրողների համար մի րուբլի տպագրվելուց յետոյ գինը կը բարձրանայ:

Յանկացողները թող շուտով մեզ հասցնեն իրանց բաժանորդագիրը հետեւեալ հասցեով:

Въ Бакъ. Въ типографію Александра И. Касабова.

Ա. Կասպեանց,
2—20

Հայոց Կովկասի Բարեգործական Ընկերութեան ամսիս 4-ի ընդհանուր ժողովում, Արծրունու թատրոնում, կորած է նոյն Ընկերութեան № 9 Անգորրամատենը, գործադիր անդամների համար, 10 անգորրադրերով, № № 96—105, որոնցից ծախված էին միայն առաջին երեքը, կրելով հետեւեալ անունները՝ Բժշկապետ Շահ-Պարոնեան, Ռուշան Գեղամեան, Խահահ Բուդգանեան: Եթէ այդ անգորրամատենը գրանդի կողմից յետ չը դարձուի Ընկերութեան, նրանում միացած անգորրագրերը, այն է №№ 99—105, անպօր են համարվում:

Փորձված ձԱՐՏԱՐԱՊԵՏ և ՏԵԽՆԻԿ ՀԱՄԼԵ-
մատարար փոքր գնով յանձն է առնու-
քաղաքային շինութիւնների նախագծերի և
նախահաշիւների կազմելը, պլանների կազ-
մելը իր տեղ և հսկողութիւն աշխատանք-
ների վրա: Արեւել է տեսնել ամեն օր ա-
ռաւտեան 7—9 և երեկոյեան 3—9 ժա-
մը: Անդրէկեական փողոց տուն № 35:
3—4 (2)

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

Այն պարոններին և զբաղմունք-
նոցներին, որոնց կամ ուր ուղարկված
են վաճառելու «ԵՍ ԵՒ ԻՄ ՍԱՋԻ» օ-
րինակները, շտապեն վաճառուածների
փողերը և, եթէ չեն ցանկանում շա-
րունակել վաճառումն, մնացած օրի-
նակները ինձ հասցնել այս հասցեով:
Чрезъ Просковую въ гор. Св.
Креста. Учителю Сафарянцъ.

«ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԹԵՐԹԻ»

Խմբագրութիւնը ընդունում է բաժանոր-
դագրութիւն 1884 թ. (որ է 3 տարե-
շրջան):

«ԹԵՐԹԻ» կը հրատարակվի ԵՐԵՎԱՆԻՄ,
նախընթաց տարիների ծրագրով, կը տպա-
գրվի պ. Էմին Տէր-Գրիգորեանցի տպարա-
նում:

Տարեկան գինն է՝ 3 ռուբլ կանխիկ վճա-
րելի:

Ստորագրվել կարելի է խմբագրատանը,
օտար քաղաքացիք գիմում են հետեւեալ
հասցեով՝ Вѣ г. Эривань. Въ редакцію
журнала «Гигиенический Листокъ».

Խմբագիր-հրատարակիչ բժ. ԼԵՈՆ ՏԻԳ-
ԲԱՆԵԱՆՑ:



Շուշու բնակիչ, կոլեժսկի բեգիստրատօր ԼԵՎ ԱՆԲԵԿ ՎԱՐԱՋՈՎ, յայտնում
է հասարակութեանը, որ ՇՈՒՇՈՒՑ մինչև երկաթուղու ելվ. (նախկին Ագակի) կայարանը
կամ հակառակ, յարմար և մի օրվայ ընթացքում ճանապարհորդելու համար նա կազմել է ութ ՏԵ-
ՂԵՐ ունեցող, շատ ՅԱՐՄԱՐ և ընդարձակ ՕՄՆԵՐՈՒՄ, որով անցնելու համար մի
ճանապարհորդից վերցվում է 5 ր., իրաւունք ունենալով 1 1/2 ՊՈՒԿ իրեր տանել, իսկ եթէ դրա-
նից ծանր լինեն, իւրաքանչիւր պուդից 40 Կ. կը վերցվի: Ճանապարհորդի իրերը 3 պուդից աւելի
պէտք է չը լինեն: ՕՄՆԵՐՈՒՄԻ գնացքները կը սկսվեն ներկայ **ՆՈՅՆԵՐԵՐԻ**
5—6 (3)

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒՇՈՒՄԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Հ. ՊԱԿԷ և ԸՆԿ.

MINGRELIE (ՄԻՆԳՐԵԼԻԱ)

Այրաի, 4 դեկտեմբերի հասաւ ԲԱՌԻՄ
շողմաւ որի նաւապետն է ՆԷԼ (NEL)

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան ագենտներին. Բաթումում պ. ՀԵՔԻՄԵԱՆՑԻՆ,
Փոթիում պ. ԳԱՐԱՆԻՕՆԻՆ, Իսկ ԹԵՖԼԻՍԻՄ պ. ԲԸՆՈՒՆ, Արժրուտու գաւիթէա, № 194.

„Ա Ղ Բ Ի Ի Բ“

Լոյս տեսաւ № 11 (նոյեմբեր) թէ քաղաքում բաժանվեց և թէ օտարաքաղաքացիներ
ի համար փոստ ձգվեց երկի ամսոյս (21-ն).

ԲՈՎԱՆԵՐԻՍԻՒՄ

ԱՐՄԵՆԱԿԱՆ ՈՒ ԳԱՐԵԳՐԻՆԸ	Վ. Ռ.
ԳՈՒԹԱՆ (բանաստեղծութիւն)	Սրինգ
ԵՐԿՈՒ ԿԶԳԻ (Ալֆոնս Բակիրովից)	Փոխադր. Օր. Միհրուհի
ԽԵՂՃ ԴԱՐՁ օրիգ. նալլաթ (բանաստեղծութիւն)	Մ. Գամալեանց
ՓԱՅՏԱԶԷՆ ԽՐՃԹԻԳ՝ Սպիտակ տունը (շարունակութիւն դր. XVI, XVII, XVIII և XIX)	
ԹԱՀՈՒՆՆԵՐՆ ՈՒՐ ԵՆ ԳՆՈՒՄԴԱՆԸ	Փոխադր. Լ. Մ—Ա.
ՉԱՐԱԾՃԻ ՊԻՍԿԻ արարմունքը	Ն. Նեմեյով

ՀԵՏԱՔՐԲԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լուսանկարչութիւնը կենդանի մարդու վրայ,
ձանձրի լեզու.
Ջրի և ցամաքի վրայ շարժվող կառք.
Ամենամեծ գետերը:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ

Եղբայրական սէր

ՋՈՒԱՐՃԱԼԻՔ

Հինգ մասեր Սարգիս Փիլոսոփ
Հանելուկներ (6 հատ.)
Շուտասելուկ
Վանեցոյ երգը:
Նախընթաց №-ի մէջ հանելուկների բացատրութիւնը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Աղբիւր» 1884 թուականի բաժանորդագրութիւնը շարունակվում է:

ДОНСКАЯ ПЧЕЛА

(годъ IX)

Какъ и въ теченіи минувшихъ восьми лѣтъ, будетъ выходить два раза въ недѣ-
лю, по четвергамъ и воскресеньямъ.
Пѣль газеты—служеніе интересамъ Приазовскаго края: разработка вопросовъ, касаю-
щихся экономической жизни этого края, своевременное обсужденіе всѣхъ явленій, имѣющихъ
близкое соприкосновеніе съ мѣстной жизнью, оглашеніе болѣе или менѣе важныхъ событій,
текущія явленія, и мѣстныя новости.
Жизнь окружающихъ городовъ и другихъ сосѣднихъ мѣстностей—въ „Донской Пчелѣ“,
имѣетъ всегда обширное мѣсто.
Торговый отдѣлъ „Донской Пчелы“ доведенъ до самыхъ широкихъ размѣровъ; ком-
мерческія свѣдѣнія, пѣль Ростовскаго, Саратовскаго, Одесскаго и другихъ торговыхъ рын-
ковъ. Этотъ отдѣлъ особенно важенъ для всего торговаго міра Кубанской, Донской, Терской
областей, Екатеринославской, Воронежской и Ставропольской губерній, гдѣ „Донская Пче-
ла“ уже успѣла получить достаточную извѣстность, какъ необходимое подспорье для торго-
выхъ сдѣлокъ.

Подписная цѣна:

на годъ.	съ доставкой въ Ростовъ н/Д.	на годъ.	съ пересылкою иногороднимъ.
полгода	6 р. —	полгода	7 р. —
3 мѣсяца	3 > 50	3 мѣсяца	4 > —
	2 > —		2 > 50

За перемѣну адреса редакціи взимаетъ 25 коп.

Письма и деньги адресуются исключительно въ контору редакціи «Донской Пчелы» въ Рос-
товъ на-Дону.

Редакція покорнѣйше проситъ Гг. иногороднихъ подписчиковъ присылать свои тре-
бованія заблаговременно, написать свои полные адреса четко и разборчиво.

ПРЕМІЯ Въѣмъ годовымъ подписчикамъ, приславшимъ до 25 Декабря сего 1883 года под-
писныя деньги за 1884 годъ, будетъ разосланъ БЕЗПЛАТНО Донско-Азовскій русско-армян-
скій календарь на 1884 годъ.

Редакторъ—Издатель И. А. ТЕРЬ-АБРАМІАНЪ.



ՇՕԿՈԼԱՏ ԵՒ ԴՐԱԺԷ

Ս. ՍՈՒԻ ԵՒ ԸՆԿ.

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄՕՍԿՎԱՅԻ ՄԷՋ

Գանվում է ԹԻՖԼԻՍԻՄ հետեւեալ մագաղիներում: Գ. Մ. Կօպաձէի,
Ս. Անիկի, Ս. Պ. Ալօպօլի, Վ. Ֆ. Սիւտովի, Ե. Ա. Եղիազարովի, Գ. Ա. Բախաղ-
չեկի, Ս. Ա. Շուրիանովի, Յ. Ա. Բաբանսօովի, Յ. Ի. Գուրգենովի, Ի. Ա. Եւանգու-
լովի և ուրիշ շատերի մագաղիներում, նոյնպէս և ԿՈՎԿԱՍԵԱՆ երկրի
միւս բոլոր քաղաքներում:

20—24 (1—15)

ՈՒՐԲԱԹ, 9-ին դեկտեմբերի

Ս. ՉԻՃԵԱՆ, որ ջուլթակի վրա է ածում, կը տայ Արժրուտու թատրոնում

ԿՕՆՑԷՐՏ-ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ

մասնակցութեամբ տ.ա. Պատուլի, Նիկոլայեվայի, Քիկովայի և պ.պ. Օպօչնիկի, Կիրի-
էնկօի, Գօրսկու և Բէախնգի:

2—2

ՎԻԵՆՆԱՅԻ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ՄԱՆԻ

ԲԱԹՈՒՄ, ՏՈՒՆ ԹԱՅԻՐՈՎԻ

Մեծ քանակութեամբ ապրանքների պահեստ և վաճառատուն, ուր գտնվում են մեծ
քանակութեամբ ամեն տեսակ կոշիկներ-ոտնամաններ, գուլպա-չուլքեր, հովանոցներ-
գոնիկներ, հագուստներ աղամարդի և կանանց, աղուկներ-բաղդադեր կովկասի ձա-
շակով, շապկիներ, ժամացոյցեր, ոսկի և արծաթէ: Ամեն տեսակ սպիտակեղէններ (շուշե-
ղէն), օրպէս են սաքաններ, վազեր և այլն: Նոյնպէս և դանակներ, պատառաքաններ-
գդալներ Ֆրաժի Ֆարրիկից և հասարակ տեսակներից, կոճակներ, քաթանեղէն, գըլ-
խորկներ և այլն և այլն ամեն ապրանքից գտնվում են մեծ քանակութեամբ շատ տե-
սակներով: Ծախվում են Ֆարրիկի գնով և առանց աւելցուլի (безъ-запроса): Ընդու-
նում է պատւերներ օտարաքաղաքներից ամեն տեսակ ապրանքների:

Հասցէն БАТУМЪ, Мани, д. Таирова.

ՄԱՆԻ

Վերականգնեցող ՄԱԿ-ՄԱՍ
ՏԵՐ, մագերը ամրացնող և նրանց
ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերադար-
ձնող: Գինը 2 ր. շերտ, ՓՈՍՏԱ-
ՅՈՎ ուղարկված 2 ր. 49 կօպ:
ԱՆԳԼԻՍԱԿԱՆ խանութի մէջ



Մի և նոյն տեղը ԻՒՆԱՅԻ
ԻՒԴ, մագերը ամրացնող հա-
մար, 1 ր. ամանը և վրձին գլխա-
ցաւի դէմ: ՏՈՒՆԱԼԵՏԻ ՍԱ-
ՊՈՆ և հասաւէա ջրեր և այլն:
99—100